

ԲԱԳԻՆ

Pakine



ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ■ ԱՐՈՒԵՍ ■ ԻՄԱՑԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԼԵՈՆԱՐՏՕ ԱՆԻՇԱՆ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ԳՈՀԱՄԵՂԱՆԻՆ ՆՈՒԻՍԱԲԵՐՈՒՄԾ ՈՂՁԱԿԵՐՈՐ

Լէոնարտօ Ալիշան, իրանա-ամերիկա-հայ (ինքն այսպէս էր բնութագրում իրեն, Armenian-Iranian-American հերթականութեամբ) գրող, բանաստեղծ, գրականագէտ (1951-)։ Դեռ շատ նոր է կորուստը։ Զեռքս չի շրջում համակարգչիս կոճակները սեղմելով լրացնելու փակագծի մէջ առնուած տարեթուները՝ 2005 չարաշուք թուականը, որ Լէոնարտոյի սոսկալի վախճանն է նշում։ Անակնկալ, աներեւակայեւիորէն սարսափելի արկած, որ խլեց կեանքը այդ տաղանդաւոր արուեստագէտի։

Մօր մահացու հիւանդութիւնը վերջին ամիսներին նրան վերածել էր պահապան հրեշտակի։ «Եթէ մայրս էլ մեռնի, էլ ինչի՞ համար պիտի ապրեմ», յաճախ ասում էր երբ հեռախօսով, Լոս Անջըլեսից Սալթ Լէյք Սիթի կապուում էինք իրար հետ։ Յոսսահատ էր, թեւաթափ իսկ այդպիսի պարագաներում, իմ պարտականութիւնն էր սփոփել, քաջալերել, որ միտքը զբաղեցնի գրելով։ Ամիսներ էր, որ գրիչ չէր վերցնում, չէր ստեղծագործում։ Ո՛չ տրամադրութիւն ունէր եւ ո՛չ էլ տան միջոցաւոր էր օգնում։ Իսկ գրելը, ստեղծագործելը, նրա համար դեղ էին ու դարման, միակ միջոցը առողջ ինքնամոռացութեան, միակ փրկութիւնը խմիչքի կործանիչ ազդեցութիւնից կամ խելագարութիւնից։ Զէ՞ որ Մայքըլ Ֆուքոն ասել էր եւ ինքն էլ հաւատում էր, թէ «որտեղ կայ արուեստի գործ, չի կարող լինել խելագարութիւն»։¹

Մօր մահը, թեկուզ արդէն սպասելի, մեծ հարուած էր։ Նարդոն այլեւս ինքը չէր. ապրում էր մեծ մասամբ անգիտակից. ապրում էր իբրեւ պարտականութիւն՝ գոյութիւն քարշ տալու պէս։ Կեանքի հարուածներին այլեւս չէր կարողանում դիմանալ։ Կորցրել էր համալսարանական դասատուութեան իր սիրած աշխատանքը, որի համար բազմաթիւ մրցանակների ու գնահատագրերի էր արժանացել։ Քանդուել էր տասնեօթ տարուայ վերուվարումներով լեցուն նրա ընտանեկան կեանքը. կինը երեխաներին առած հաստատուել էր Լոս Անջըլիսում։ Ինքը մի քանի տարի միայնակ ապրելուց յետոյ փոխադրուել էր մօր տանը։ Իսկ մօր մահից յետոյ (Օգոստոս, 2004) մենակ էր. իր կեանքի աւերակների վրայ տուայտում էր աննպատակ։

1 Տե՛ս Լէոնարտօ Ալիշան, «In Memoriam, Vahé Oshagan» (1921-2000), Վահէ Օշականի յիշատակին, Ararat/Autumn 2000. էջ 65:


Եթէ ճիշտ է այն վարկածը, թէ ծայրայեղ դժբախտութիւնը արուեստագէտին կարող է գլուխ-գործոցներ ներշնչել, ապա դա ամենայն ճշգրտութեամբ գործում էր Լէոնարտոյի կեանքում: Եթէ ճիշտ է այն վարկածը, թէ հանճարեղ արուեստագէտները տարօրինակ բնաւորութեան տէր են լինում եւ դիւրին չէ նմանների հետ ապրել, ապա դա էլ ամենայն ճշգրտութեամբ գործում էր նրա կեանքում:

Նարդոն սովորական մէկը չէր, դա զգացել էր նրա մեծ-մայրը ու նրան դարձրել էր իր սրտակիցը երբ դեռ նա հազիւ ինն տարեկան էր, նրա հետ կիսել էր Յեղափոխութիւնը վերապրածի իր ահաւոր վիշտն ու անդիմադրելի ցաւը: Նարդոն իր հոգում կրեց այդ ցաւը ու երբեք չկարողացաւ ձերբազատուել այդ հսկայ բեռից: «Ես փորձում եմ մէկ հանդիսատեսը լինել այդ ողբերգութեան, որ իր գազաթնակէտին հասաւ Լոնդոնի մի հիւանդանոցում 1978-ին, ուր մեծ մայրս մահից առաջ թուրք ձիաւորներ էր տեսնում իր մահճի շուրջ: Բայց ի դուր, ես հանդիսատես չեմ: Ես դերակատար եմ այդ խաղարկութեան մէջ, որ երբեք, երբեք, երբեք իր հաւասարակշռումին չի հասնում»:²


Լէոնարտո Ալիշանը ծնուել էր Թեհրանում: Միջնակարգ ուսումը ստացել էր ամերիկեան թեքում ունեցող Անդիշէ դպրոցում եւ աւարտել էր Թեհրանի պետական համալսարանի պարսկերէն եւ անգլերէն լեզուների ու գրականութեան բաժանմունքը: 1973-ին ուսումը շարունակելու համար մեկնել էր ԱՄՆ եւ 1981-ին ստացել էր տոքսոթրայի աստիճան համեմատական գրականութեան մէջ, Թեքսասի համալսարանից, Ասթին: Աւարտաճառի նիւթն էր՝ «Միտումներ (ուղղութիւններ) արդի պարսկական բանաստեղծութեան մէջ»: 1978-1997 պարսկական եւ համեմատական գրականութիւն էր դասաւանդել Սալթ Լէյք Սիթի, Իւթաչի համալսարանում:


1974-ին Նարդոն ամուսնացել էր Նելի Ասատրեանի հետ եւ ընտանիքը բազմացել էր երեք զաւակով, Մայքըլ, Արա եւ Ալլին: Նելին նրա մէկ ու միակ իրական սէրը մնաց ամբողջ կեանքում, հակառակ սիրային կարճատեւ արկածների, որ միայն նրա անհանգիստ հոգու ու տաղանդաշատ արուեստագէտի ծայրայեղ բնաւորութիւնից էր բխում, ու հակառակ ամուսինների բաժանման: Նելին նուիրած բանաստեղծութիւնները նրա անկեղծ ու անմար սէրն են վկայում:

Հայերէնը զլացուել էր նրանից: Հայերենից միայն խօսակցական լեզուի վարժանք ունէր: Մեծ մայրը նրան



2 Լեոնարտո Ալիշան, «An Exercise on a Genre for Genocide and Exorcism» Ռիչըրդ Յովհաննիսեանի խմբագրութեամբ լոյս տեսած The Armenian Genocide, History, Politics, Ethics հատորում (London: Macmillan, and New York: St. Martin's Press, 1992), էջ 352:





3 Armenian Review, 38:85.

4 «Once in a While It's OK to Walk Naked in the Crowd» The Restless World of Leonardo Alishan, Interview by Ara Oshagan and Anahid Adamian, Asbarez English Weekly, March 14, 1992,

5 Նոյն տեղում:

սովորեցրել էր Այբուբենը: Մնացեալը թողնուած էր իրեն: Հայերէնի թարգմանական գրականութիւնն ու համաշխարհային գրականութեան մէջ եւ դրանց սկզբնաղբիւրների նկատմամբ ունեցած իր խոր իմացութիւնը եւ վերջապէս ցեղասպանութիւնը վերապրողի անյաղթելի ցաւը նրան դէպի հայոց գրականութիւն էին առաջնորդել ու տուել էին նրան զգացողութեան ու ճանաչումի բանալին: Նրա առաջնեկ մուտքը հայոց գրականութեան անդաստանում բնականաբար Հայոց Ցեղասպանութեան էր կապուած (Crucifixion without the Cross: The Impact of the Genocide on Armenian Literature³).

Ստեղծագործում էր մեծ մասամբ անգլերէն լեզուով կամ պարսկերէնով: Բայց հոգին հայ էր. «Իմ բանաստեղծութեան զգացողութիւնը երեւի պարսկական է, բովանդակութիւնը՝ յաճախ հայկական, արտայայտութիւնը՝ ամերիկեան . . . Գիտեմ, որ հայերէն եմ երազում, պարսկերէն եմ դասաւանդում, անգլերէն եմ գրում» ասել էր «Ասպարէզ»ի անգլերէն բաժնին տուած մէկ հարցազրոյցի ընթացքում⁴: Ինչպէ՞ս կարող էր նրա հոգին հայ չլինել երբ նրա ստեղծագործութիւնների մեծ մասը մեծ-մօրն էր նուիրուած. իսկ նրա համար մեծ-մայրը Հայաստանն էր. «Եօթանասուն հինգ տոկոսը իմ բանաստեղծութիւնների կամ Հայաստանի մասին են, կամ մեծ-մօրս. եւ մեծ-մայրս Ցեղասպանութիւնն է. նա նոյնպէս Հայաստանն է»⁵:

Եւ իրօք, Նարդոյի մեծ մայրը Հայոց Ցեղասպանութիւնն էր՝ անձնաւորուած: Սիրիայի անապատներում, աքսորի ճամբին կրած տառապանքների սոսկալի յուշերը հալածում էին նրա հոգին: Լալիս էր միշտ, մանաւանդ՝ երբ մենակ էր կամ, ինչպէս Նարդոն է վկայում, երբ կարծում էր թէ մենակ է, եւ պարբերաբար հոգեբուժարան էր ընկնում: Ու Նարդոն ինն տարեկան էր միայն երբ նա պատմեց իր ընտրեալ թոռնիկին, թէ ինչո՞ւ է միշտ լալիս, ինչո՞ւ է այսքան դժբախտ: Մի օր աքսորի ճամբին թուրք զինուորականը ձիով անցնում է նրա կողքից ու ասում, թէ գիշերը պիտի գայ տանի նրան: Տասնչորս տարեկան գեղեցիկ Գայեանէն կարմիր թաշկինակ ունէր գլխին կապած: Մի պառաւ կին խորհուրդ է տալիս գլխակապը նետել որ չճանաչուի: Գիշերը երբ տեղահանուած գաղթականները կանգ են առնում ժամանակաւոր ճամբարում, Գայեանէն տեսնում է թուրքին որ ձիու վրայ դրած տանում է կարմիր գլխակապով մի աղջկայ: Աղջիկը գտած էր եղել կարմիր թաշկինակը ու գլխին կապել: Թուրքը վերադառնում է մե-

նակ: Սպանել էր աղջկան⁶: Խղճի խայթ ու յանցանքի
զգացում պատճառող այս յուշը հալածեց խեղճ կնոջ,
տանջեց ու տանջեց եւ մինչեւ խենթութիւն տարաւ
նրան: Ահա այն չարագուշակ պատմութիւնը, միւս չարագուշակ
յուշապատումների կողքին, որ Նարդոյին
տուեց դժբախտութիւնը իր կեանքի, բայց նաեւ՝ հսկայ
դրամագլուխ - ցաւից, արիւնից, աւերից ու տառապան-
քից բաղկացած - ու դրա արգասիքը՝ զեղարուեստական
գողտրիկ արտայայտութիւն իր գերազանցութեան մէջ:

Ամերիկայի պարսիկ համայնքի համար Լէոնարտո
Ալիշանը փնտռուած գրականագէտ էր, որ պարսիկ
գրականութիւնը գիտէր ծայրէ ի ծայր՝ հնագոյն ժամա-
նակներից մինչեւ ներկայ օրերը, ամենից անյայտ բա-
նաստեղծից մինչեւ ամենից անուանին: Կարող էր մէջբե-
րել շատերին անյայտ կտորներ ու վայրկեանի մէջ վեր-
ծանել դրանց հենքում գործող մշակութային, իսլամա-
կան ու դիցաբանական տարրերը ու դրանք բաղդատել
ժամանակի միջազգային գրականութեան միտումների
հետ: Լէոնարտոն սիրում էր իրանը: Նրա հայրենիքը
Արմիրանն էր, ինչպէս գրում էր, եւ ինքը՝ այդ կապակ-
ցութեան պտուղը: «Արմիրան» վերնագրած բանաստեղ-
ծութեան մէջ այսպէս է բնութագրում այդ հայրենիքը,
որ միայն իրեն է պատկանում, միայն իր սրտում է, ինքն
է ստեղծել եւ ինքը՝ ստեղծուել նրա կողմից:

.....

Արմիրանը այն է, որի կրծքով իմ հոգին
կերակրուեց. այն վայրն է, ուր ես սովորեցի
սիրել ու հայհոյել չափածոյ:

.....


Իմ հայրենիքը Արմիրանն է՝ Արմենիա, իրան
եւ շատ աւելին, երկուսից էլ առաջ եւ անդին

.....

Արմիրան՝ մօր կաթից առաջ, Դրախտից անդին . . .⁷

Հայաստանի սէրը նրա մէջ աւելի չեշտուեց ու երեւա-
կայական հայրենիքը շօշափելի ներշնչում ու յոյգերի
աղբիւր դարձաւ երբ 1991-ին, Կալիֆորնիոյ Համալսա-
րանի, Լոս Անջելըս (UCLA), հայագիտական ամբիոնի եւ
Երեւանի Պետական Համալսարանի գրականութեան
բաժանմունքի կողմից կազմակերպուած գիտաժողովին
մասնակցելու համար փոքր խմբով, ղեկավարութեամբ

6 Leonardo Alishan, «The Lady-Bug
and the Persian Rug», Ararat, xxxv:94,
էջ 32: Այս պատմութեան, երկու այլ
պատմութեան հետ, լոյս է տեսել
Գրական Թերթում Շուշանիկ Աւագ-
եանի թարգմանութեամբ: Տես «Զատի-
կը եւ պարսկական գորգը», 08.10.1996:



7 «ARMIRAN» անտիպ բանաստեղ-
ծութիւնից:

Ալիշանի բանաստեղծութիւնների
իրական եութիւնը եւ ո՛չ թէ միայն
նրա իմաստը - ինչպէս իմ մօտաւոր
թարգմանութիւնից կարելի է ընկալել -
ըմբռնելու համար, բերում եմ նաեւ
կատարուած մէջբերումի բնագիրը:

.....



Armiran is where my soul
was suckled; it's where I learned
to love and curse in verse.

.....

My home is Armiran: Armenia, Iran,
And much much more; before and
beyond both.

.....

Armiran: before a mother's milk,
beyond Paradise . . .



8 Ալիշանը իր Հայաստան նամբոր-
դութեան տպաւորութիւններն ու նամ-
բորդութիւնից առաջ եւ յետոյ ունե-
ցած իր գգացումները արտայայտել է
արձակի եւ չափածոյի գեղեցիկ հա-
մադրումով շարադրուած մի գործի
մէջ, որ ինքը «From Dream to Reality:
Don Quixote with a Dead Horse and
Windmills with no Wind» է վերնագրել:
Տես Ararat/Autumn, 1992, էջ 23-27:

ամբիոնի ժամանակի վարիչ Աւետիս Սանճեանի, Երեւան
մեկնեցինք: Լէոնարտոն ներկայացնում էր “Nahapet
Kuchak and the return of the Great Goddess” իր խիստ հե-
տաքրքրական ուսումնասիրութիւնը, որ ես թարգմանել
էի հայերէնի՝ պարզ բառերով ու կարճ նախադասու-
թիւններով՝ որպէսզի ինքը կարողանայ դիւրութեամբ
կարդալ: Այդ փորձառութիւնը իր համար միաժամանակ
տառապանք էր ու երջանկութիւն: Հակառակ իր նիւթի
խոր իմացութեան, վախենում էր, համարձակ չէր: Երե-
ւի գիտէր, թէ շատերը իրենց տգիտութիւնից ելած նրան
պիտի դատէին ո՛չ թէ հայոց միջնադարեան գրականու-
թեան ուսումնասիրութեանը բերած իր նոր շնչով, այլ
իր «կմկմալէն կարդալ»ով: Բայց այս ճամբորդութիւնը
պիտի կատարէր, ինչպէս գրում էր ինձ. «Ես պիտի իմ
մօրս վերադառնամ»: Ու վերադարձաւ: Խորապէս
տպաւորեց այն գրականագէտներին, որոնք նրա հոգու
եւ մտքերի խորքը տեսան: Պատանու պէս սիրահարուեց
հայրենիքի ամէն քարին: Զարմացաւ երբ հայ «բող» տե-
սաւ: Լաց եղաւ եւ իր ունեցած դրամը նուիրեց երբ
մարմնավաճառ աղջիկը գինետան մէջ պատմեց իրեն,
թէ ինչո՞ւ պարտաւոր է այդ ճամբով դրամ աշխատել:
Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհին
նուիրուած Լէոնարտոյի ուսումնասիրութիւնը գուգա-
դիպութիւն էր եւ չէր: Քուչակը հայ հեթանոս աշխարհի
Մայր Աստուածուհուն էր վերադառնում, իսկ Նարդոն
իր մայր հայրենիքին: Երկուսի ճամբորդութիւնն էլ ցա-
ւոտ էր ու դարերի տանջող կարօտը մնում էր անյա-
գուրդ: Նարդոյի երազած հայրենիքը այլեւս չօշափելի
էր, կեանքով եռուն, իսկ նա այդ կեանքին չէր պատկա-
նում: Ու հայրենիքը նրա համար պիտի շարունակէր
մնալ ներշնչումի ու անբացատրելի կարօտի աղբիւր
միայն⁸:

Իսկ Իրանը, նրա համար ծննդավայր էր, երանելի Իս-
ֆահանը, ուր տարիներ պարել էր ընտանիքով, պատանի
սէրերի, տխուր եւ ուրախ յուշերի աղբիւր: Իսֆահանի
դրախտային յուշերին էր նուիրուած “Remembrances”
բանաստեղծութիւնը, որ Lullwater Review-ի 2002-ի
առաջին մրցանակին արժանացաւ: Իրանը նրա բանաս-
տեղծութիւններում գեղեցիկ կին էր նոյնիսկ, որին կա-
րելի էր սիրել ու բաղձալ:

Զկայ աւելի կոպիտ հաճոյախօսութիւն
քան մի կնոջ ասել,
թէ միակ կինը, որ ես գիտեմ

Քեզանից աւելի գեղեցիկ
դու էիր

քո ջահել օրերին:

Առաւօտ, կէսօր ու գիշեր
իմ բոլոր դասախօսութիւններով
իմ բոլոր գրութեանքներով
գոչում եմ հեռուից,
յիշի՛ր քո երիտասարդութիւնը, Իրան,
դու լուսաստղն էիր⁹:

Ամերիկեան գրականութեան անդամատանում նա ճա-
նաչուած էր որպէս նուրբ ու զգայուն հոգի, որ տառա-
պում է մարդկութեան տառապանքներով:

Եթէ ես ունենայի ձեռքեր
սրտիս չափ մեծ

Ես կը վերցնէի բոլոր փոքր ու մեծ
դրօշները մեծ ու փոքր ազգերի
եւ իմ մեծ ձեռքերով կը կարէի
մի այնպիսի հսկայ ծածկոց ու վրան,
որ աշխարհը չի տեսել երբեք,
աշխարհի մերկ երեխաների համար —

երանի ունենայի ձեռքեր
բերանիս չափ մեծ¹⁰.

Ամերիկայի գրական շրջանակները այս իւրայատուկ
բանաստեղծին գնահատել են՝ նրան մեծ կարեւորու-
թիւն եւ համբաւ ունեցող մրցանակների արժանացնե-
լով: Արիշանի շահած մրցանակներից են՝

The Academy of American Poets Award, 1977

The New England Poetry Club's Daniel Varoujan
Award, 1981

Utah Arts Council, "light verse" category, 1985

The New England Poetry Club's Daniel Varoujan
Award, 1998

Missouri Poetry Society, free verse category, 1999

USPS Carlton Award, free verse category, 1999


Winter SPIN's Haibun Contest, New Zealand, 2001

Lullwater Review, Poetry Prize, 2002

NFPS's Prose Poem Contest, 2003

People Before Profits Poetry Prize, 2003

Վերջին մրցույթի մէջ առաջնութիւն չափած բանաս-
տեղծութեան մասին ("Tired Thoughts" — Յոգնած Մտա-



9 «I Saw Susa» (2003), տպագրուած
Button, fiction poetry, gracious living
#13 պարբերականում:

There is no crueller compliment
than to tell a woman:
the only woman I knew
more beautiful than you
was you

in younger days.

Morning, noon and night,
with all my lectures
with everything I write,
I shout from afar:
remember your youth, Iran,
you were the morning star.

10 «Utilitarianism» հրատարակուած
Sufi, issue 58, summer, 2003 պարբերա-
կանում:

If I had hands
as big as my heart

I would take all the small
and big flags of all the big
and small nations and I would
sew them with my big hands
into the biggest blanket and tent
the world has ever seen
for all her naked children —

I wish I had hands
As big as my mouth!

11 Մեջբերուած է Burning Bush Publication-ի կողմից Լեոնարտոյի նյութաւոր նամակից:

12 «Tired Thoughts» (2003)

They have buried ten million mines
in Afghanistan, one land mine
for every two or three Afghans,
regardless of age or ethnic
background.

They have planted death in the womb
of the mother. Prosthetic limbs are
airdropped
with food. They have planted a mine
under God's pillow and his dream of
doves.

Every night a new dark dream spreads
its wings in my sleep. This morning
I woke
with a throbbing headache. I woke
tired.

I had diffused or detonated mines
all night.

A dream so real, I checked my limbs.
They were still mine. A dream so dark
I checked my heart. God was still
there.

But also still mine and also still there

was the problem of ten million mines,
ten million limbs, ten million lives,
ten million
dreams, blown apart in the heart of
a God
who plows with farmers and lives
in my heart.

ծումներ) հիացումով է արտայայտուում դատական կազմի ղեկավար Աբբի Լին Բոգոմոլին: Այս բանաստեղծութեամբ, գրում է նա, «դու օգնեցիր աշխարհին յղելու պատգամներ, որոնք, ուղղուած են կասեցնելու կարծաշունչ տնտեսական առաւելութեան փառաբանումը ու ցոյց տալու կեանքի սէրը, որ գիտենք յարատեւող է¹¹»: «Յոգնած մտածումներ» բանաստեղծութեան մէջ եւս Ալիշանի մարդասիրութիւնն է արձագանգում, նրա մղձաւանջը ի տես անարդարութեան. իսկ ո՞ր է Աստուած: Միթէ՞ այդ բոլորը նրա հաւանութեամբ չի կատարուում:

Տաս միլիոն ականներ են թաղել
Աֆղանիստանում, մէկ ական
ամէն երկու կամ երեք աֆղանցու համար
ինչ էլ որ լինի նրանց տարիքը կամ ազգութիւնը:

Մօր արգանդում մահ են սերմանել:
Արհեստական ձեռք ու ոտք են օդանաւերից վար
թափում ուտելիքի հետ: Ական են դրել
Աստուծոյ բարձի տակ ու աղաւնիների նրա երազի:

Ամէն գիշեր մի նոր սեւ երազ
թեւերն է բացում քնիս մէջ: Այս առաւօտ
ես արթնացայ սոսկալի գլխացաւով: Արթնացայ յոգնած:

Ես ական էի ոչնչացրել կամ պայթեցրել ամբողջ գիշեր:

Երազ, այսքան իրական, ձեռք ու ոտքս ստուգեցի:
Իմս էին դեռ: Երազ, այսքան սեւ
սիրտս ստուգեցի: Աստուած դեռ այնտեղ էր:
Բայց նոյնպէս դեռ իմս եւ նոյնպէս դեռ այնտեղ

Թնջուկն էր տաս միլիոն ականների,
տաս միլիոն ձեռք ու ոտքի, տաս միլիոն կեանքի, տաս
միլիոն երազի, փշրուած սրտում մի Աստուծոյ
որ հերկում է մշակների հետ ու ապրում է իմ
սրտում¹²:

Ալիշանի տաղանդն ու նորի փնտռումները նրան մղեց
փորձարկելու համաշխարհային գրականութեան դժ-
ւարին ժանրեր, ինչպէս ճապոնական հայքուն, սեմ-
րիուն եւ քանթան, դրանց մէջ զօդելով իր անձնական
զգացումները, իր ազգային մշակոյթն ու աւանդու-
թիւնները առանց դրանց պարտադրած ձեւի տակ կքե-

լու: Ջէյն եւ Վլորնըր Բայքհոլդները Լէոնարտոյի հայրու, սենրիու եւ Թանքա Ժանր Թեքնիքով ստեղծած բանաստեղծութիւնների Through a Dewdrop ժողովածուի գրախօսականի մէջ գրում են, թէ այդ բանաստեղծութիւններում «մշակոյթների նուրբ միաձուլում է կատարւում, որ գործը դարձնում է աւելի արժէքաւոր, աւելի իւրայատուկ եւ ուրեմն՝ վաւերական: Նոր ձեւեր փորձարկելով, սակայն, նա հաւատարիմ է մնում իր ազգային ժառանգութեան՝ ճկելով բանաստեղծական ձեւի ոգին՝ իրեն պատշաճեցնելու համար, փոխանակ ինքն իրենից ու իր մտքերից զիջելու եւ ճապոնական բանաստեղծութեան յարմարութիւնը¹³»:

Լէոնարտոն ծնունդն էր հայկական, իրանական եւ ամերիկեան մշակոյթների միաձուլման, եւ հանգիստ ու հեղասահ կարող էր թիափարել երեքի անդաստաններում միաժամանակ: Բայց երբ նիւթը Հայոց ցեղասպանութիւնն էր, հայ ժողովրդի դէմ կատարուած ոճիրը, ահաւոր անարդարութիւնը, Նարդոն իր տառապած ազգի տառապող զաւակն էր, տառապած մեծ-մօր տառապած թոռնիկն էր, որ իր յոգնած կռակին տանում էր ծանր բեռը Եղեռնի սեւ յուշերի՝ մեծ-մօր անձի մէջ խտացած: “Growing With My Heritage (For Two Victims of the Armenian Genocide)” բանաստեղծութեան մէջ այդ բեռան մասին է խօսում: Յոգնած է: Ապրիլեան արեւակէզ անապատում ի զուր է ստուերոտ անկիւն փնտռում այդ բեռը՝ մեծ-մօրը վար դնելու համար:

... Նա ծանր է ու ես ծեր եմ հիմա
եւ զգում եմ յոգնութիւնը. եւ կարծես
կարեւոր է, թէ ես սկսեցի
մեծ-մօրս կրել իմ մէջքին
երբ նա նիհար էր եւ տասնըչորս տարու
իսկ ես հագիւ ինն տարեկան¹⁴:

Լէոնարտոն Հայոց ցեղասպանութեան երրորդ սերունդի վերապրողն էր, որ Եղեռնի մղձաւանջային յիշատակների մէջ թակարդուած իր գոյութիւնն էր քարշ տալիս: Ամէն տարի Ապրիլ ամսին Նարդոն խենթութեան դրանն էր հասնում. կարծես ամբողջ տարին նրան տանջող սեւ յուշերն ու մեծ-մօր յիշատակները յորձանք էին դառնում ու նրա ուղեղը ներխուժում: Արդիւնքը՝ անպայման մի նոր ստեղծագործութիւն էր Եղեռնին նուիրուած: Դրանք ինձ ուղարկելուց «այս Ապրիլի աղբ» (garbage) էր անուանում: 2000 Ապրիլի «աղբ»ը մի թատերգութիւն էր, “The Red Scarf” (Կար-


Through a Dewdrop by Leonardo Alishan



13 LYNX, a Journal Linking Poets.

14 Եւ անգլերէն բնագիրը մէջբերւած հատուածի՝

... She is heavy and I am old now
and feel the weariness. And it does not
seem to matter that I first began
to carry granny on my back
when she was thin and fourteen
and I was barely nine years old.



15 «An Exercise on a Genre for Genocide and Exorcism», էջ 352-53:

16 «The Lady-Bug and the Persian Rug», էջ 32:

17 Leonardo Alishan, «The Shapes of the Moon», Ararat, xxxv:94, էջ 30: Թարգմանութիւնը տես Գրական Թերթում, 08.10.1996, «Լուսնի Կերպերը» Շուշանիկ Աւագեանի թարգմ.:

միր գլխաշորը), իր առաջին ու միակ գործը այս ժանրի մէջ: Հին յունական ողբերգութեան կաղապարով էր գրուած: Ինքնակենսագրութիւն էր: Մեծ-մայրը ի հարկէ ներկայ էր թէ՛ իրական եւ թէ՛ որպէս տասնչորսամեայ աղջիկ, որ միայն թատերգութեան հերոսին էր երեւում: Ուժեղ կտոր էր: Քաջալերեցի, որ փորձի գտնել մէկին, որ բեմադրի: Ինքը չհետեւեց: Դա իր գործը չէր:

Հայոց Եղեռնին նուիրուած արձակ եւ չափածոյ կտորները Լէոնարտոյի գլուխ-գործոցներն էին: Բայց ինքը դեռ գոհ չէր: Մաքառում էր, ճգնում գտնելու ամենից ազդու, ամենից պատշաճ միջոցը, ժանրը, արտայայտիչ ձայնը: Միշտ ապարդիւն: «Չկայ որեւէ յարմար ժանր ցեղասպանութեանը գեղարուեստական արտայայտութիւն տալու համար . . . Արուեստագէտը մղուած է մի կողմից՝ իր արուեստին ծառայելու եւ միւս կողմից աշխարհին հաւաստիացնելու իր ժողովրդի հաւաքական աղէտի մասին: Նա միեւնոյն ժամանակ անկողմնակալ արուեստագէտի դերի մէջ է, միւս կողմից փրփազանդիստի դերում: Արդիւնքը չփոթ է ժանրերի եւ դերերի. իսկ հետեւանքը՝ յուսակտուր ձախողանք¹⁵»:

Բայց գրեց, թէկուզ իր կարծիքով ձախող կտորներ, որոնք պիտի ապրեն իբրեւ կոթող՝ Հայոց Ցեղասպանութեան յիշատակը ոգեկոչող: Գրեց: Չէր կարող չգրել: Խոստացել էր մեծ-մօրը՝ աշխարհին պատմել իր ժողովրդի ահաւոր ողբերգութիւնը՝ պատմութիւնը իր մեծ մօր: Մահից յետոյ էլ մեծ մայրը կենդանի էր նրա հոգում: Նոյնիսկ տատիկ դարձած ապրում էր Նարդոյի սենեակում գցուած մի հին, խայտաբղետ գորգի վրայ: «Սա իմ դժոխքի այգին է», ասել էր, «ուր ես պիտի չարչարուեմ այն յանցանքիս համար, որ ապրեցի՝ երբ աշխարհը վերջ գտաւ վաթսուն տարիներ առաջ»¹⁶: Եւ Նարդոյի համար դա իրականութիւն էր, տեսանելի, չօղափելի կեանքի երեւոյթներից էլ աւելի իրական: Մեծ մայրը յուշում էր Նարդոյին չմոռանալ, պատմում էր անդադար անգամ մահից յետոյ: Պատմում էր պատմութիւնը իր կարմիր գլխաշորի: Պատմում էր, թէ ինչպէս սպանեցին մօրը, ինչպէս ծարաւից մեռաւ եղբայրը: Ինչպէս ազատուեց ինքը: «Ուզում եմ, որ բոլորը իմանան, թէ ինչ պատահեց մեզ: Ես ուզում եմ, որ դու իմ պատմութիւնը պատմես աշխարհին», կրկնում էր նրա ուրուականը¹⁷:

Լէոնարտոն մնաց բանտուած իր մեծ մօր տառապանքի աշխարհում: Այդ աշխարհը ներխուժեց նրա կեանքի իրականութեան մէջ ու սպառնաց խաթարել նրա դատողութիւնը, առողջամտութիւնը: «Առողջամտութիւն, կարմիր արջուկ, որ հայրս ինձ բերեց, երբ նշագեղձերս

էին հանում: Ես այն կորցրի կամ եկեղեցում եւ կամ գերեզմանատանը երբ մեծ-մայրս մեռաւ: Նա էլ մեռաւ խելագար. թուրք ձիաւորներ էր տեսնում հիւանդանոցի իր սենեակում¹⁸: Գայեանէն, Հայոց Եղեռնի «կենդանի նահատակը», իշխեց Լէոնարտոյի երազի ու իրականութեան վրայ: Լէոնարտոն նրա աչքերով տեսաւ Հայոց Ցեղասպանութիւնը:

Իմ երազի մէջ տեղում
մի քարաշէն վանք կայ Վանում
դրսից կղպուած դժոխքի դարպասների պէս
ներսից նիչ ու ծուխ է արտահանում,
հայ հաւատացեալները նրա մէջ
մոմերը իրենց մսով են փոխարինում:

....
միշտ, ամբողջ գիշեր, բոցերի մէջ
բայց երբեք հիմնայատակ չի այրում:
Եւ վանքի մէջ այրում է մէկ արձանը Աստուածածնի
իմ մեծ մօր դէմքով, մոմը կաթում է նրա աչքերից
կաթիլ առ կիզիչ կաթիլ, իմ երազի մաշկին:¹⁹

Granny-ին (միշտ այսպէս էր կոչում մեծ-մօրը), Նարդոյի սէրն էր մոլեգնութեան հասնող, նրա ընտրեալը ու . . . նրա ճակատագիրը: «Granny չորս թռչունիկ ունէր, բայց չէր կարող չորս մասի բաժանուել: Ուրեմն ինձ ընտրեց: Վերջապէս երբ մի տուն այրւում է բոլորը նրա հետ չեն այրւում: Ես այրուեցի երբ հազիւ ինն տարեկան էի: Այո՛, դա այն օրն էր երբ իմ տունը այրուեց ու ես այրուեցի նրա հետ»²⁰: Ի՛նչ ճակատագրական արտայայտութիւն. . . . ճակատագրական՝ դիպուածային, թէ՞ նախապաշարում ու ապագայի դաժան գուշակութիւն: Բայց միթէ՞՞ այդքան անխիղճ էր ճակատագիրը, որ պիտի ի գործ դրուէր տառացի: Նարդոն ապրեց Հայոց Եղեռնի զոհասեղանին նուիրաբերուած ողջակէզի պէս ու այրուեց, մոխրացաւ իր տանը բռնկուած հրդեհի մէջ 2005 թիւ Յունուար 9-ին: Իր այրուած տան ու իր մոխրացած դիակի հետ մոխրացան նաեւ մեծ-մօր վերջին յիշատակները եւ ով գիտէ քանի քանի անտիպ ստեղծագործութիւն:

Դեռ չատ երկար կարելի է գրել, խոր ուսումնասիրութեան ենթարկել Ալիշանի գրական արգասիքը: Այս կարճ ուսումնասիրութիւնը երբեւէ չի յաւակնում վերջին խօսքն ասել նրա կեանքի ու ստեղծագործութեան մասին: Յուսամ, որ պիտի կարողանամ աւելի ժամանակ տրամադրել աւելի ընդլայնելու ուսումնասիրութիւնս²¹:

18 Leonardo Alishan, «Deathtime», Ararat, xxiii:3, էջ 65:

19 Leonardo Alishan, ECCE HOMO (գլխագիր եւ շեղագիր, ինչպէս ինքն էր ցանկանում), անտիպ բանաստեղծութիւն. ներքեւում մէջքերուած հատուածի բնագիրը.

In the center of my dream
there is a church of stone in Van
sealed from outside like the gates of hell
exhaling screams and smoke from inside;
its congregation of Armenian folk
replacing the candles with their flesh.

....
always, all night, in flames
but never burning to the ground.
And in the church burns a statue of Mary
with my Granny's face, wax dripping
down her eyes
drop by scorching drop, on the skin of my
dream.

20 «The Lady-Bug and the Persian Rug», էջ 32:

21 «Լեոնարդո Ալիշան» հանրագիտարանային յօդուածն լոյս պիտի տեսնի Encyclopedia of Ethnic American Literature բազմահատորեայ հանրագիտարանում: Անցեալ Դեկտեմբերին լրացրի: Ինքը տեղեակ էր: Նախ բողոքեց, թէ ինքը ինչ ունի հանրագիտարանին յարմար. յետոյ՝ ուրախ էր ու շնորհակալ: Բայց ես գիտեմ, արածս քիչ էր. ինքը աւելիին էր արժանի:

22 «Անգլիագիր Հայ Գրողներ - Լեոնարդո Ալիշան» Անգլերէնից քարգմանեց եւ ծանօթագրեց Գուրգէն Արզումանեան. «Բաց Նամակ» եռամսեայ, թիւ 5 (11), Նոյեմբեր 1996, էջ 64: Թարգմանուած բանաստեղծութիւնները, էջ 65-76:

23 LYNX, a Journal Linking Poets.

Յուսամ, որ երիտասարդ գրականագէտներ պիտի մղուեն մենագրութիւններ նուիրելու այս բացառիկ տաղանդով օժտուած, կեանքի բացառիկ փորձից ու փորձութիւնից անցած արուեստագէտին:

Լէոնարդո Ալիշանը ունի բանաստեղծութիւնների երկու առանձին հատորներ՝ Dancing Barefoot on Broken Glass (1991) եւ Through a Dewdrop (2000): Առաջին հատորից կատարած մի քանի թարգմանութիւնների աւելթով, Գուրգէն Արզումանեանը այսպէս է ծանօթացնում ժողովածուն, «Գիրքը ունի հետաքրքրական կառոյց, երեք ենթախորագրով. լաւատեսութիւն՝ «Պարել», յուսահատութիւն եւ հաւատքի կորուստ՝ «Ոտաբոբիկ», աղէտ՝ «Փշրուած Ապակիների Վրայ», որոնք մէկտեղւած կազմում են ժողովածուի անունը: . . . Պարել²¹: Ինչո՞ւ ոչ: Սակայն երբ ոտաբոբիկ ես, պտոյտներով ու թռիչքներով վերացուած, վստահաբար ինչ որ մի տեղ աւամայ ոտք կը կոխկոտես փշրուած ապակիների վրայ: Հետեւանքը, ակնյայտ է»²²: Երկրորդ ժողովածուն արդէն ճապոնական հայքու, սեմրիու եւ թանքա ժանր թեքնիքով ստեղծագործուած բանաստեղծութիւններ են: Դրա մէջ, ինչպէս Ջէյն եւ Վլընըր Բայքհոլդներն են գրում, ամէն մի բանաստեղծութիւն մի պատկեր է ո՛չ միայն հեղինակի եւ իր կեանքի, այլ նաեւ՝ իրականութեան²³:

Լէոնարտոյի մնացեալ բանաստեղծութիւնները, գեղարուեստական արձակն ու գրականագիտական ուսումնասիրութիւնները ցրուած են հայ եւ ամերիկեան պարբերաթերթերում: Հայոց գրականութեան համար հսկայ կորուստ կը լինի եթէ դրանք չհաւաքուեն ու չհրատարակուեն առանձին հատորների մէջ:

ԴՈՒՍ. ԱՌԻԲԱՍ ՓԻՐՈՒՄԵԱՆ